
ԱՐՄԻՆԷ ՔԷՕՇԿԷՐԵԱՆ. Գանձարանային մշակույթ. Սկզբնաւորում եւ զարգացում (Ժ.-ԺԳ. դարեր), *Երեւան, «Եասուն» հրատ., 2008, 389 էջ:*

Ա. Քոչկերյանը տարիներ ի վեր զբաղվում է հայ միջնադարյան գրականության մեջ լայն տարածում գտած երկու ժանրերով՝ տաղերով ու գանձերով: 1981-ին հմուտ առաջաբանով, գիտական հիմնավորումներով նա հրատարակել է Գրիգոր Նարեկացու տաղերի ու գանձերի քննական բնագրերը: Այժմ գիտական շրջանառության մեջ է դրված նրա նոր գիրքը, որը նվիրված է հայ միջնադարյան իրականության մեջ գանձարանային մշակույթի ձևավորմանը X–XIII դարերն ընկած ժամանակահատվածում: Այս տարողությամբ նման քննությունը մեզանում կատարվում է առաջին անգամ և կարևորվում է Արմինե Քոչկերյանի կատարածը հայ միջնադարյան գրականության մեջ եղած տեսակները լիովին սահմանելու առումով:

Հարցի մասին պատկերացում կազմելու համար ասենք, որ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են շուրջ 248 «Գանձարան» ժողովածու¹: Եվ դա միայն այստեղ: Այդ ժողովածուները ստեղծվել են 8 դարերի ընթացքում: Արմինե Քոչկերյանը ներկայացնում է միայն առաջին 4 դարերը: Նա իրավացիորեն նկատում է, որ այդ բազմաքանակ ժողովածուները հատուկ ուսումնասիրության նյութ չեն դարձել, մինչդեռ դրանք հետաքրքիր են հայ չափածո խոսքի զարգացման ընթացքը պատկերացնելու առումով, նույնիսկ արդարացիորեն բողոքում է. «Մինչև օրս չունենք լիարժեք որևէ Գանձարանի տպագրված օրինակ» (էջ 6): Հեղինակը նշում է, որ 1739-ին Կոստանդնուպոլսում լույս է տեսել «Փոքրիկ Գանձարան» ժողովածուն, որը, սակայն, անկատար է: Տարբեր մասնագետներ գանազան առիթներ

րով անդրադարձել են Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Մխիթար Այրիվանեցու, Գեորգի, Մովսեսի, Սարգսի և ուրիշների գանձերին, իսկ անգլիացի նշանավոր հայագետ Ֆ. Կոնիբերը թարգմանել է Մկրտիչ գանձասացի «Մաքրեալ տաճար սուրբ տէրունական...» սկսվածքով գանձը (էջ 7): Հայկական գանձերին և տաղերին անդրադարձել է գերմանացի հայագետ Ֆեթթերը՝ թարգմանելով 15 նմուշ: Այդ թարգմանությունները բարձր է գնահատել Հ. Տաշյանը (էջ 8):

Գանձերի հրատարակման լուրջ ծրագիր է կազմել Հր. Աճառյանը՝ մեկ առ մեկ թերթերով Ս. Էջմիածնի ձեռագրատան մատյանները, սակայն նրա կազմած «Գանձարան» ժողովածուն մնացել է անտիպ և այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանում²: «Գանձարան» ժողովածուներով զբաղվել են Մեսրոպ Մազիստրոս Տեր-Մովսիսյանը և ակադեմիկոս Լ. Խաչիկյանը: Գանձերի ու տաղերի բանասիրական հետազոտության առաջին լուրջ փորձը կատարել է Մ. Պոտուրյանը:

Ա. Քոչկերյանը Մաշտոցի անվան Մատենադարանում աշխատած տարիներին բանասիրական համակողմանի քննության է ենթարկել «Գանձարան» ժողովածուները, որի արդյունքն է հենց գրախոսվող գիրքը: Աշխատությունն ունի հետևյալ բաժինները՝ ա) «Գանձարանային ստեղծագործություններ և Գանձարան ժողովածուներ», բ) «Ժ.-ԺԳ. դարերի գանձասաց և տաղասաց հեղինակներ», գ) «Հնագույն մի խումբ գանձաբարոզների քննական բնագրեր»:

¹ Տե՛ս Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Ջեթոնյան, Փ. Անթաթյան, ներածությունը՝ Օ. Եզանյանի, Երևան, 1965, հ. Բ, Երևան, 1970:

² Հր. Աճառյանի գրականագիտական ուսումնասիրությունների մասին տե՛ս Խ. Բ ա դ ի կ - յ ա ն. Հրաչյա Աճառյան, Մարդը և գիտնականը, Երևան, 2005, էջ 356-363:

«Քանձասաց ու տաղասաց հեղինակներ» գլխում Ա. Քյոչկերյանը Գրիգոր Նարեկացուն ներկայացնում է որպես գանձարանային մշակույթի հիմնադիր: Նրանից հետո XII դ. հայ քնարերգության մեջ գանձասացությունը զարգացնող երկրորդ վիթխարի դեմքը եղել է Ներսես Շնորհալին, որի անվան հետ են կապվում գանձարանային օրինակապատկերների զարգացումն ու կատարելագործումը: XIII դ. նշանավոր մատենագիր Մխիթար Այրիվանեցին իր հորինած մի խումբ գանձերով կազմել է «Գանձարան» ժողովածու: Մխիթար Այրիվանեցու գանձերի քննական բնագիրը Է. Հարությունյանի աշխատասիրությամբ լույս է տեսել 2005-ին: Այդ գրքի ծավալուն նախաբանում աշխատասիրողը եզրահանգում է, որ Մխիթար Այրիվանեցին նոր կանոններ է մշակել գանձագրության հանգավորման ու չափաբերման համար, նորովի է օգտագործել ծայրակապային արվեստը, ձայնագրել ու խազագրել է գանձերի որոշակի քանակ, որի առհավատչյան ձեռագրերում պատահող հետևյալ մակագրությունն է. «Տէր Մխիթար վարդապետի բայի երգել հինգոտասան բան քարոզից»: Աշխատասիրողի կարծիքով «Մխիթար Այրիվանեցու» բանաստեղծական արվեստը իր ինքնատիպ ոճով ժամանակին մեծ դեր է խաղացել գանձագրության զարգացման գործում: Նրա գանձերի անմիջական ազդեցության տակ են գրվել Հովհաննես Գանձասացի, Գրիգոր Խլաթեցու, Մատթեոս Ջուղայեցու, Առաքել Բաղիշեցու նմանատիպ ստեղծագործությունները, որոնցում առկա են ոչ միայն Մխիթար Այրիվանեցու կիրառած չափաբերական արվեստի ձևերը, այլև նրա գանձերից վերցված առանձին բառերի, նույնիսկ նախադասությունների բառացի կրկնություններ»³:

Ա. Քյոչկերյանը փաստում է, որ բանասերները մինչև XX դ. 40-ական թվականները Գր. Նարեկացուն վերագրում էին ընդամենը 3 գանձ, որոնք նվիրված են Սուրբ Հոգու, Եկեղեցու և Խաչի տոներին: Իսկ նրա տաղերի թիվն ավելի մեծ է՝ երկու տասնյակ: Աշխատասիրողը Գրիգոր Նարեկա-

ցուն անվերապահորեն վերագրում է 10 գանձ ու 21 տաղային միավոր, որոնք հանդես են գալիս գանձարանային ժողովածուներին բնորոշ հատկանիշներով՝ ներկայացնելով եկեղեցական 16 տոն: Հեղինակը ներկայացնում է Գրիգոր Նարեկացու գանձերի ու տաղերի համակարգը: Որպես արտագանձարանային տաղ գետեղված է «Տաղ Յարութեան, Գրիգոր Նարեկացույն ասացեալ» - «Մայլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց...» (էջ 63): Ա. Քյոչկերյանը ենթադրում է, որ Գրիգոր Նարեկացին ունեցել է Գանձատետր, որն էլ որոշ պայմանակալությամբ համարում է նախատիպ «առհասարակ Գանձարանների, նաև անհատական, հեղինակային Գանձարան ժողովածուների համար» (էջ 65): Որպեսզի Գրիգոր Նարեկացու տաղերով ու գանձերով հետագա հետաքրքրվողներն ու հետազոտողները հեշտացնեն իրենց գործը քննական բնագրերը ճշգրիտ հասկանալու խնդրում, աշխատասիրողը կցում է նրա տաղերի ու գանձերի բառացանկը՝ օգտագործելով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակը, Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» (քառահատոր), Ռուբեն Ս. Ղազարյանի 2004 թ. Անթիլիասում հրատարակված «Գրաբարի բառարանը»: Հեղինակը խոստովանում է, որ որոշ բառեր դուրս են մնացել բառացանկից, որովհետև դրանց բացատրությունը վերոհիշյալ բառարաններում չի գտել: Ա. Քյոչկերյանի այս նախաձեռնությունն ավելի քան կարևոր է, որովհետև Նարեկացու գանձերի ու տաղերի թարգմանիչները տաղաչափական և պատկերավորման չափանիշները պահպանելու մղումից երբեմն բնագրի մոտավոր իմաստն են հաղորդում: Մինչդեռ գիտական խոսքի հիմքը պետք է լինի միայն բնագիրը և նրա անթերի ընկալումը:

Որպես օրինակ բերենք «Բառացանկի» մի քանի բառերի բացատրություններ.

աղխիք (աղխ) – կապ, փականք («Իսկապէս ...», Գանձ),

անորիշ – անորոշ, անսահման, անմեկնելի («Գանձ անապատում ...», Գանձ),

բարունակ – որթատունկի, նաև այլ տնկիների ոստ, սերունդ, շատավիղ («Գանձ փառաց ...», Գանձ),

³ Մ ի թ ա ր Ա յ ր ի վ ա ն ե ց ի. Գանձեր և տաղեր, աշխատասիրությամբ Է. Հարությունյանի, Երևան, 2005, էջ 64:

գեղատիտր – անշուք, անգարդ («Գանձ լուսոյ...», Գանձ),

դիմառ – նա, ով խոսում է ուրիշի բերանով («Անուն անեղին...», Տաղ),

յեռանձնաթիւ (եռանձնաթիւ) – երէք անձի թվով («Գանձ փառաց...», Գանձ),

զուարճարոյս – առույգ, լուս աճող («Գանձ փառաց...», Գանձ),

է – գոյություն ունեցող, մակդիր՝ Աստուծո, Աստված («Մինն էին...», Տաղ),

շարամանեալ (շարամանե) – ներհյուսել («Գանձ անապատում...», Գանձ),

պարածածկեալ (պարածածկել) – ամբողջապէս ծածկել («Բսկապէս...», Գանձ),

ստեւ – անասունների բարակ ու կարճ մազ, մանավանդ ուղտի, ոչխարի բուրդ («Բսկապէս...», Գանձ),

տարակացելոց (տարակացեալ) – հեռացած, օտարացած, տարագրված («Բսկապէս...», Գանձ),

բախճան – ուրախություն, խրախճանք («Գանձ բաղձալի...», Գանձ),

քառաջահեան – ուր չորս ջահ է վառվում, լուսափայլ («Շողովեալքս...», Գանձ):

Այս բառաբացատրության օրինակները պերճախոս վկայում են, որ աշխատասիրողն իսկապէս մտահոգ է բանասիրությանը զբաղվողների խոր գիտելիքների խնդրով:

Ա. Քրոշկերյանն իր գրքում կատարում է բանասիրական ճշգրտումներ: Դրանց մի մասը վերաբերում է XIII դ. գանձասաց Մովսէս Երզնկացուն (ծն.՝ XIII դ. կեսերին, մահ՝ 1323): Վերջինիս մասին շատ քիչ տեղեկություններ կան: Նա կրթվել է Սեպուհ լեռան Ավագ վանքում: XIV դ. սկզբում տեղափոխվել է Երզնկա: Հայտնի է, որ հավաքել է եկեղեցու սուրբ հայրերի բազմաթիվ խրատներն ու վարքերը՝ կազմելով «Ոսկեփորիկ» ժողովածուն: Մովսէս Երզնկացին գրել է գանձեր, սակայն մասնագետները դրանք վերագրել են ուրիշ Մովսէսի: Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆ. Մակլերը, օրինակ, Փարիզի Ազգային գրադարանում եղած № 79 ձեռագրի 20 գանձերը վերագրում է X դարում ապրած Մովսէս Տարոնացուն⁴: Ղ. Ալիշանը հաստատապէս չգիտէ, թե ով է այդ գանձերի հեղինակը և կարծում է, թե

նա ստեղծագործել է հին ժամանակներում՝ «հեղինակին բավական հնությունն այլ ցուցնէ» (էջ 222): Աշխատասիրության հեղինակը, հիմնվելով Նորայր եպս. Պողարյանի կարծիքի վրա, այդ գանձերը վերագրում է Մովսէս Երզնկացուն՝ նրան համարելով Փարիզի Ազգային գրադարանի -79 ձեռագրում պահվող 20 գանձերի հեղինակը: Միաժամանակ նա նկատում է, որ Մովսէսի անունով պահպանված գանձերը Գևորգ Սկևացու գանձերի թեմատիկայից ունեն շեղումներ: Դրանք բովանդակում են արդեն ազգային դեմքերին ու հերոսներին նվիրված օրինակներ: Դրանցում հիշատակվում են Տրդատ Մեծը, Վարդանանք և Ղևոնդյանք:

Ա. Քրոշկերյանը հետաքրքիր ճշգրտումներ է արել նաև Խաչատուր Կէչառեցուն վերագրվող գանձերի խնդրում: Նա հանգամանալի խոսում է XIV դ. վերջին տասնամյակում Գրիգոր Խլաթեցու կազմած ու խմբագրած գանձարանների մասին: Ծիսական քնարերգության այդ միավորները դառնում են ժամանակի թելադրանքը: Եվ հայ միջնադարի երախտաշատ հոգևորականներից մեկը՝ Գրիգոր Խլաթեցին (1349-1425 թթ.), ոչ միայն խմբագրում է գանձարանային ժողովածուները, այլև ինքն է հորինում դրանք: Այստեղից էլ Գանձարան ժողովածուների մի մեծ խումբ բանասերներին հայտնի է Խլաթեցիական անունով: Հարցի քննությունը պարզում է, որ գանձարանային միավորների հին օրինակները չունեն լրիվ կանոնակարգված օրինակափոխություններ, ինչպիսիք առկա են Խլաթեցիական օրինակներում: Աշխատասիրողը նշում է. «Գանձարաններում տեղ գտած նյութերն ունեն գանձարանային որոշակի համակարգ, և այդ համակարգը հանդես է գալիս գանձ-տաղ-փոխմեղեղի պատկերով, անշուշտ, ոչ միշտ պահպանված իր ամբողջական տեսքով» (էջ 25):

Ա. Քրոշկերյանը տալիս է գանձի սահմանումը նախ ըստ «Նոր բարգիրք հայկազեան լեզուի» հեղինակների. «Գանձ կոչին երգք և քարոզք, առեալ ի սկզբնաւորութենէ երգոց Նարեկացոյն»: Հետո բերում է իր վերջնական սահմանումը. «Գանձը հոգևոր բանաստեղծության մի ուրույն տեսակ է՝

⁴ Sté u Fr. M a c l e r. Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale. Paris, 1908, p. 37.

նվիրված եկեղեցական տոների ու սրբերի կամ ազգային այնպիսի հերոսների, որոնց սրբացրել է եկեղեցին» (էջ 27): Գանձերը պատմողական ձևով ներբողում էին տվյալ տոնը և գանձում ներկայացվող սրբին: Նրանք ունեին կայուն կրկնակ՝ Աղաչեմք կամ Խնդրեմք բառերով: Գանձերի հատկանիշներից մեկն էլ այն է, որ դրանք ունեն հեղինակի անունով ծայրակապ: Գանձերի հիմքում ընկած են քարոզները: Ա. Քրժկերյանի կարծիքով գանձերի մեծ մասը եկեղեցում կատարվում էին, ինչպես քարոզները: Բանասերը բնութագրում է գանձերին կցվող տաղային միավորները, ինչպես նաև փոխերը կամ հորդորակներն ու մեղեդիները:

Գանձարանային հարստությունը ստեղծելու գործում մեծ դեր են ունեցել Խաչատուրն ու Մկրտիչը, որոնց անվան հետ են կապված թվով 47 գանձ: Ա. Քրժկերյանը հավաստում է, որ այս երկու գանձասացները համագործակցել են, և Խաչատուրը հենց ինքը՝ նշանավոր Խաչատուր Կեչառեցին է. «Հիշյալ գանձերի բնագրերն, անշուշտ, քննական մանրակրկիտ վերլուծության չենք ենթարկել, այնուամենայնիվ, դրանք բնութագրող էական հատկանիշները թելադրում են մտածել, որ հեղինակային պատկանելության առումով բոլորը (թերևս չնչին բացառությամբ) պետք է պատկանեն միննույն անձնավորությանը: Այդ անձը, ամենայն հավանականությամբ, Խաչատուր Կեչառեցին է, որ բանասիրության մեջ հաճախ է հիշվում իբրև գանձերի հեղինակ» (էջ 249): Մկրտիչին վերագրվող գանձերը թվով 27-ն են, և բոլորը ծայրակապով հորդում են Մկրտիչ անունը: Ահա այս Մկրտիչը և Խաչատուր Կեչառեցին համագործակցել են: Խաչատուր Կեչառեցու՝ իր

ապրած ժամանակի գրական աշխարհի դեմքերին առնչվելու, համագործակցելու, նրանց գործը ուղղորդելու փաստացի օրինակ է նաև Ստեփանոս Օրբելյանի «Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկէին» երկի հիշատակարանի հետևյալ հատվածը.

Փութով մեծաւ զմեզ հարկեալ,
Ի յայս հանդէս բանից մղեալ,
Ընդունապետս հոգւով լցեալ,
Անյաղթ հոռտս շնորհօք ծաղկեալ
Եվ բանիբուն մեզ ճանաչեալ,
Յազգաց բազմաց գովաբանեալ,
Որ Խաչատուրս է յորջորջեալ,
ՅԱրարատեան տանէն եկեալ⁵:

Ինչպես Ստեփանոս Օրբելյանը Խաչատուր Կեչառեցու պատվերով գրեց այս հայտնի ողբը, այնպես էլ Մկրտիչը նույն Խաչատուր Կեչառեցու համագործակցությամբ ու խրախույսով կարող էր գրել իր գանձերը: Հայ միջնադարյան գրողների միջև նման փոխկապերի բազում օրինակներ մեզ ընձեռում են նաև հայտնի այլ փաստեր:

Գրքի վերջում (էջ 285–364) Ա. Քրժկերյանը զետեղել է «Քարոզ Ջատկաց, գոր սացեալ է սրբոյն Բարսղի Կեսարու Կապպադոկեցոց» IV դարից եկող և Գանձարաններում հաճախ հանդիպող քերթվածք, որի քննական բնագիրը կազմել է ըստ տարբեր մատենադարաններում պահպանվող գրչագիր մատյանների:

Ա. Քրժկերյանի «Գանձարանային մշակույթ» գիրքը պարտավորեցնում է հայ հին գրականությունը հետազոտող մասնագետներին շարունակել բանասերի գործը՝ երևան հանելով հետագա շրջանի գանձարանային հարստության բանասիրական համակարգումը՝ համապատասխան քննական բնագրերի կազմումով:

ՆԵԼԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ

⁵ Խ ա չ ա տ ու ը ր Կ է չ ա ո ե ճ ի. Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Դուրխանյանի, Երևան, 1988, էջ 103: